

կանչելով. կ'սկսի սիրով կը համոզէ
 խաբէրով, կ'որոսայ նենդութեամբ.
 կը տանի մեղմով. կը թողու խոստ
 ուերով, կը հարցնէ սաստեղով. կը հա-
 բուածէ մտաբերով. ուտել կ'ուզէ
 ճնշելով: Աթէ որոր Հասակնար միտքն
 ինչէ ընկղմեցաւ անշուշտ ամբողջ մար-
 մնով. և կորսուեցաւ ամենայն կենօր:
 Հայ մը որ բուն Հայու ծնունդ
 է, նորա ախանջացն անլուր է հոռի
 մի օրհնութիւնը. Հայուն որդին սչ
 սակաւ ժամանակէ ՚ի վեր նորա վար-
 մին մէջ բռնուած երբ կը տեսնէ այ-
 սօր հայութիւն վերբը, կը թօթովէ կամ
 թօթովել կ'ուզէ իւր վզէն օտարին
 լուծը. վասն զի կարաւ ի ձուէն կա-
 քաւ դուրս կուգայ թէ և իրան ագ-
 ուաւ նստի. կարաւ ի ձագը կարաւ
 կը մեծնայ թէ և ագուաւ սնուցանէ:
 Հայու որդին թող Հոռովի մէջ չըր-
 ջագայի, նա դարձեալ հայ է, թող
 Հոռովմայեցին ալ բուական սեպէր ու-
 ըրնները խաբէրով թէ Հայերն հոռի

մայեցիներ կը ծնին. և ինքն ալ չկա-
 բուէր թէ այն բուն հոռովմայեցիներ
 կը ծնանին հայերէն: Թթենիներու
 մէջ որթ ալ կը բուսնի, սակայն ինչ
 պէս կարելի է որ կարծեն հասկացող
 ները թէ որթն ալ թթենի է. և և թէ
 արմաւ ի հունտ մը ինկնայ որ և է
 անկոյ պարտեղի մը մէջ, արդեօք պի-
 տի չկարենայ բուսնիլ, կամ թէ երբ
 բուսնի այն տունկերէն պիտի բուս-
 նի. չենէ բուն արմաւ պիտի վեր բե-
 րէ: Անտարակցս ենք որ արմաւ պիտի
 յառսջ բերէ: Սակայն փորձ և հը-
 մուտ պարտիզպանը կ'ըսէ որ արմաւն
 իր արուին մերձ չեղած պողպարեւու-
 թիւն ունեցած չէ, և չունենար: Ա-
 հա այսպէս ալ Հայը օտար ազգոյ
 մէջ ալ մարդ է, սակայն օտարի մէջ
 Հայու ծնունդ ունենալ դժուարա
 հաւատարի է. կամ թէ Հայն ուր
 ալ ծնանի դարձեալ Հայու արիւն
 պիտի ծնանի:

Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն Վ Ա Ր Գ Ա Ն Ա Ն Ծ

- Հայոց մեծաց քաջ զօրապետ Մամիկոնեան վեհ Վարդան:
- Վարդ դու բուրեալ յիմանալի յայդուջ մեծի արքայի,
- Ընուչ հոտով քաղցր բանից սասուածայնոց յինքնդ ձգես,
- Օբազմութիւն արանց քաջաց և գիւցազանց գոռ մարտկաց:
- Վեհ կորովի ՚ի նա յաւեալ անքակտելի ուխտ դնեն,
- Օեկեղեցին Հայաստանեաց մի տալ յաւեր թշնամոյն,
- Ըյլ հալածել զկինճն վայրի զապականիչ սրբութեանց,
- Որ դուն գործէ զասուածատունին այդ ի խեալ յարմատոյն,
- Կրխան աւնել իւր պիղծ տոկոյն և որջանալ ՚ի նմա:
- Քաջեանն Հայոց մեծ բանակին ՚ի զրահ ՚ի զէն վառեցան,
- Միտանդեալ արդարութեան անթափանցիկ ՚ի վահան,
- Եւ սաղաւարան անխոցելի եղին ՚ի գլուխ փրկութեան,
- Բնդ որով վարք յոյժ գեղապանն փողփողելով ծածանին,
- Օջրէն հասկաց որք ՚ի հաղմոյն յարձակ դաշտի շարժեցին:
- Եւ իւն սիրոյ սուրբ հայրենեաց աշխոյժ սղղեն համայնից:

Ղօճեն նիզակս երկայնաբունս խաչիւ շքեղ զարդարեալ ,
 Ար մարդկու թեան է միշտ պաշտպան և հայու թեան մեծ պարծանք ,
 Պողովատիկ սուրբն 'ի ձեռու մն շարժեն հզօր զօրութեամբ ,
 Կիմեայ վահանն այժենակաճ կալեալք ձախալն արութեամբ ,
 Պատասպարեալ սուրբ հաւատոյ անգձելի ասպարաւն ,
 Դիմեն 'ի դաշտն Աւարայրի դէմ թշնամուոյն տալ ձակատ :

Արոյ արին Հայոց քաջաց կարապետեր մեծ Վարդան ,
 Եւ քաջաբար զհետ նորուն խաղայր գնար զօրն ողջոյն ,
 Խիստ կուռ մածեալք միմեանց զհետ վահան կցեալ ընդ վահան ,
 Եւ սաղաւարօք փայլեալ լուսով առատ շնորհիւ սուրբ հոգւոյն :
 Գան հաստիկն Աւարայրեանն դաշտ գեղեցիկ խինդ 'ի սիրտ ,
 Կանգնին հանգէպ այն չարաշուք հզօր գնդին վատասիրտ ,
 Ար 'ի վաղուց կայր բանակեալ Տղմուտ գետոյն առ եղերբ ,
 Առ 'ի քանդել զեկեղեցին անթիւ զօրօք և փղօք :

Տես ոչխարոցն երամ փոքրիկ զխարդ ի շխեն միանգամ ,
 Կրչել յառաջ ըզգիշատիչ գայլս սեւադէմ , չարսկամ ,
 Եկ թէ տեսցուք ո՛ւմ լիցի այս մեծ յաղթութիւն անվախձան ,
 Երկուսաէք քաջք պատրաստին 'ի շեփորից ձայն ահեղ ,
 Պարզին դրօշք , արք քաջարանջք դիմեն յառաջ խմբովին ,
 Բախին նդ իրեարս ուժգնապէս քաջք ընդ քաջս հարկանին ,
 Յար ընդ արիւք քաջաց երկիր թնդայ դղրդի 'ի հիմանց ,
 Աս եւս երկինք որոտընդոստ գոռայ սաստիկ սրտամամբ ,
 Օ՛ի ընդ իրեարս կոպեն ասպարք , զէնք զաղանջին շառաջմամբ ,
 Ետք կորովիք յայժ մահառիւթք 'ի նպատակ ստուռցեալք ,
 Եհեղ խմբն գործեն ձայթմունս 'ի լայնալիճ աղեղանց ,
 Եւ բացակայ լերինք բարձունք ձայնից գանգիւնս արձակեն :

Ընդ յաճախեն խոր արհաւիրք , ո՛հ յաճախեն և նախճիրք ,
 Այր զախցեան հարեալ 'ի սուր , քաջք 'ի փոշ ոջ թաւալին ,
 Երիւնն հոսեալ զերկիր համակ 'ի կարծրութիւն ներկանէ ,
 Չիք ոչ բնաւ թիւ և համար եւս գետամոյն եզերոց ,
 Ի սեւագունդ Պարսից զօրուէն մի զմիով խոնկելոց :
 Աինչ զօրականն խաչադրօշմ վարազաբար խիզախմամբ ,
 Այսպէս զեղերբ Տղմուտ գետոյն զՊարսիկն 'ի նեղ արկանէր ,
 Ահ , յայտ 'ի մեծ տագնապ յետին քաջն Վարդան տեսանէր ,
 Եթէ բեկաւ ձախակողմեան թեւըն Հայոց 'ի Պարսից ,
 Յեղակարծումն անդ իւրանայ զօրէն արծուոյ ընդ իւրոյն ,
 Օ՛րնախր զընախրս Արեաց գնդէն անշունչ սրոյն տայ 'ի կուր ,
 Օ՛րեար բազում և գ.քաջարանցն տապաստ յերկիր արկանէր ,
 Օ՛երդ միրդ տհաս սր թօթափեալ խորշակահար 'ի գեախն :

Հանդիսագիրն նահատակաց կացեալ յայերց 'ի գննին ,
 Պսակ փառաց հիւսէր նոցա արժանաւոր քաջալին ,
 Օ՛ի վարդագոյն հոսմամբ արեանց քաջքն 'ի նոսին և Վարդան ,
 Աիրով խաչին զանձինս իւրեանց զո՛հ , պատարաչ բուրեցին ,
 Օ՛ճչմարտութիւն սուրբ կրօնիցըն , որ մինչ ցայն վայր տօշորէր ,
 Պատարագաւ անձանցն ազատ 'ի թշնամեաց պահեցին ,
 Քանզի մեծ սէրն Աստուածային քան զամենայն մեծութիւն ,
 Յաւետ քան զհուր նոցին 'ի լանջս գողցես անձախ բորբոքէր :

Սէլուն Ա. Յակոբեան Դրասխի :